ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Օգոստոսի 31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Արգենտինայի արտաքին գործերի, միջազգային առևտրի և պաշտամունքի նախարար Ռաֆայել Անտոնիո Բիելսայի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսյանի և Արգենտինայում ՀՀ դեսպան Արա Այվազյանի ուղեկցությամբ: Պատվիրակության կազմում էին նաև Հայ Եկեղեցու նվիրյալ զավակներ՝ բարերարներ Էդուարդո Էռնեկյանը և Լեոն Կառլոս Արսլանյանը:

Ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ և ուրախությամբ վերհիշեց 2004 թ. մայիսին Արգենտինա կատարած իր Հովվապետական այցելությունը և հանդիպումը պրն Բիելսայի հետ: Նորին Սրբությունն իր խոսքում ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայիս գործունեությունը: Ապա Հայոց Հայրապետն իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց, ի դեմս նախարարի, Արգենտինայի իշխանություններին այն հոգատար վերաբերմունքի համար, որ դրսևորվում է հայ ժողովրդի զավակների նկատմամբ, իր օրհնությունը հղելով հայորդի բարերարներին, ովքեր կարևոր ներդրում են ունենում Հայաստանի կյանքի առաջընթացի գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև անդրադարձավ Հայոց ցեղասպանության խնդրին. «Արգենտինան առանձնահատուկ տեղ ունի մեր ժողովրդի հոգուց ներս: Արգենտինան այն երկրներից մեկն է, որը ճանաչեց և դատապարտեց Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ գործված մեծագույն ոճիր: Եվ մեր ժողովուրդը գիտի գնահատել արիության ոգին Արգենտինայի և այս երկրի ժողովրդի»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ